ելանեմք ասեն, որոնել և քննել զամենայն տեղիս ձեր, առ ով գտանիցի՝ եղիցի պարտաւոր արեան իւրոյ։ Իսկ նոքա զոր միանգամ գտին 'ի վանս, ժողովեալ առաքեցին առ նոսա։ Եւ քաղաքապետն խումբ մի վառեալ զօրօք գնացեալ էառ զբանալիս Ցոյն եւ Լատին վանաց։ ապա եկեալ էառ և զՀայոցն, և եդ առաջի դրան պահապանս 'ի զինուորաց իւրոց զարս 20։ և դուռն վանաց մնաց բաց զտիւ և զգիշեր, և զինեալ խաժամուժ ամբոխն անդադար և անարգել մտանէին և ելանէին, և հասուցանէին մահաբեր վիշտս և ընեղութիւնս միարանաց։ Եւ 'ի պատճառս պահ ունելոյ քաղաքին՝ հարին վրանս 'ի մեծի պարտիզին յանդիման վանացն Հայոց, ուր լցան բազմութիւն զօրաց, զորոց պէտս հոգային վանականքն։ Բաց յայսմանէ հասարակ ամբոխն զինեալ, խումբ արարեալ դիմէին 'ի վերայ երբեմն այս և երբեմն այն վանաց՝ գոչմամբ և աղաղակաւ, սպառնացեալ սրով բառնալ զգլուխս քրիստոնէից, և տալ աւարի զինչս վանօրէից։ Ապա կալան զՓոխանորդս և զԹարգմանս Ցոյն և Լատին վանաց, նոյնպէս միայն զԹարգմանն Հայոց, և եդին կապանօք 'ի դղեակն Դաւթի։ Եւ մինչդեռ խորհէին այլազգիք հասուցանել 'ի գլուխս քրիստոնէից զայլ չարիս՝ յանկարծ լուր իմն աւետեաց տարածեցաւ 'ի քաղաքին, թէ որ ինչ լու եղեւ վասն թշնամեաց յԵգիպտոս՝ սուտ են և անստոյգ, և 'ի վերայ այսր ցրուեցին զզօրս և ինքեանք հանդարտեցան։ արձակեցին զկալանաւորսն՝ ետուն զփականս վանօրէից և բարձին 'ի նոցանէ զպահապանսն։ Յետ այսմ ամենայնի միաբանեալ գլխաւորաց երից վանօրէից և գրեալ յայտ արարին զեղեալսն 'ի Կոստանդինուպոլիս, զի ծանուսցեն Արքայի զրռնութիւնս այլազգեաց, և հրովարտակաւ սանձել զապերասան բարս նոցին 'ի պաշտպանութիւն հպատակաց իւրոց, որք ոչ են վնասակար ումեք։

Առաւել քան զսոյն դառնութիւն, զորս գրեցաք, կրեցին նաեւ քրիստոնեայք Յոպպէի։ Դադարեցան գրութիւնք յԵրուսաղէմէ, զի ըմբռնէին զերթեւեկ նամակաւոր և բանային։ Եւ յանցանել աւուրց ինչ ('ի 21 Յուլիս) զինեալքն քաղաքին Երուսաղէմի, 'ի մեռասան ժամու տունջեան յանկարծ գրոհ տուեալ յարձակեցան 'ի վերայ